ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՈՂԻՑ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

20.01.2025թ. ք.
Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը, դատավոր Ս. Երիցյանի նախագահությամբ (այսուհետ նաև՝ Դատարան), քննարկելով, ըստ հայցի «ՍԱՄՍ-ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Հայցվոր) ընդդեմ Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Պատասխանող)՝ պայմանագրի միակողմանի մասնակի լուծումը և գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին որոշումն անվավեր ճանաչելու, գումար բռնագանձելու պահանջների մասին, հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը,

ՊԱՐԶԵՑ

Հայցվորի ներկայացուցիչը հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ Պատասխանողի՝ խնդելով

1. Մրցակցության պաշտպանության հանձնաժողով կողմից վերջինիս և «ՍԱՄՍ-ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ-ի միջև 15.04.2024 թվականին կնքված թիվ «ՄՊՀ-ԷԱՃԾՁԲ-24/17-1» ծածկագրով պայմանագրի միակողմանի մասնակի լուծումը ճանաչել անվավեր:

Որպես հետևանք՝ Մրցակցության պաշտպանության հանձնաժողովից հօգուտ «ՍԱԱՄ-ԱՈԻԴԻՏ» փակ բաժնետիրական ընկերության բռնագանձել՝ 2.388.000,00 (երկու միլիոն երեք հարյուր ութսունութ հազար դրամ) ՀՀ դրամ, որպես ծառայությունների մատուցման համար սահմանված գումար:

2. Անվավեր ճանաչել (վերացնել) «Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի ղեկավարի՝ «ՍԱԱՄ-ԱՈԻԴԻՏ» փակ բաժնետիրական ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 19.12.2024թ.-ին կայացված թիվ ՄՊՀ-ԳՔ-2024/1 որոշումը:

Հայցադիմումն էլեկտրոնային համակարգի միջոցով դատարան ներկայացվել է 09.01.2025 թվականին, կազմվել է թիվ ԵԴ2/0140/02/25 քաղաքացիական գործն, որը **մակագրվել** և **հասանելի է** դարձել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ս. Երիցյանին **09.01.2025 թվականին**:

Դատարանի 14.01.2025 թվականի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:

Հայցադիմումն էլեկտրոնային համակարգի միջոցով կրկին ներկայացվել է 15.01.2025 թվականին, որը **մակագրվել** և **հասանելի է** դարձել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ս. Երիցյանին **15.01.2025 թվականին**:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-3-րդ մասերի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Սույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

Ուսումնասիրելով ներկայացված հայցադիմումը, կից փաստաթղթերը, Դատարանը գտնում է, որ այն պետք է ընդունել վարույթ, քանի որ առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն գլխի նորմերը տարածվում են էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով դատարանի և դատավարության մասնակիցների, ինչպես նաև սույն օրենսգրքով նախատեսված այլ անձանց կողմից իրականացվող գործողությունների վրա:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.2-րդ հոդվածի 1-ին

մասի 3-րդ կետի <<բ>> ենթակետի համաձայն՝ սույն գլխի իմաստով՝ Համակարգն օգտագործող անձ է (են) համարվում՝ իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերերը, պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, **<u>գնումների հետ կապված վեճերով վարույթում պատասխանողները</u>**, ներկայացուցիչ հանդիսացող փաստաբանները, սնանկության գործով կառավարիչները, նոտարները և արտոնագրված հաշտարարները՝ **<u>անկախ Համակարգի միջոցով որևէ անգամ որևէ գործողություն կատարած լինելուց կամ չլինելուց</u>**:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բոլոր դատավարական փաստաթղթերը (հայցադիմում, դիմում, բողոք, պատասխան, դիրքորոշում, միջնորդություն և այլն) կազմվում և **<u>ներկայացվում են Համակարգի միջոցով</u>**՝ Համակարգի կողմից տրամադրվող գործիքակազմին և առաջադրվող պահանջներին համապատասխան, **<u>բացառությամբ</u>** պետական գաղտնիք կազմող տեղեկությունների, որոնք ներկայացվում են միայն նյութական եղանակով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.8-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գրավոր ապացույցները ներկայացվում են դրանք սույն օրենսգրքով նախատեսված դատավարական փաստաթղթերին կցելու և **<u>Համակարգով ուղարկելու միջոցով</u>**:

Վերոգրյալի հաշվառմամբ Դատարանը գտնում է, որ պատասխանող Մրցակցության պաշտպանության հանձնաժողովից պետք է պահանջել «ՄՊՀ-ԷԱՃԾՁԲ-24/17-1» ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները, ընդ որում, ապացույցները պետք է ներկայացվեն **<u>էլեկտրոնային համակարգի միջոցով</u>** (**<u>բացառությամբ</u>** պետական գաղտնիք կազմող տեղեկությունների):

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.1-րդ, 124-րդ, 199-րդ և 200-րդ, 234.6-րդ հոդվածներով, Դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. «ՍԱԱՄ–ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ-ի ընդդեմ Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի՝ պայմանագրի միակողմանի մասնակի լուծումը և գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին որոշումն անվավեր ճանաչելու, գումար բռնագանձելու պահանջների մասին, հայցադիմումն ընդունել վարույթ:

2. Մրցակցության պաշտպանության հանձնաժողովից պահանջել դատարան ներկայացնել «ՄՊՀ-ԷԱՃԾՁԲ-24/17-1» ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները, ընդ որում, ապացույցները պետք է ներկայացվեն **<u>էլեկտրոնային համակարգի միջոցով</u>** (**<u>բացառությամբ</u>** պետական գաղտնիք կազմող տեղեկությունների):

3. Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը պատասխանող Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի կողմից պետք է կատարվի սույն որոշումը ստանալուց հետո՝ **<u>հնգօրյա ժամկետում</u>**:

4. Հայցադիմումն Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր

իրավասության քաղաքացիական դատարան ներկայացված համարել այն սկզբնապես ներկայացնելու օրը:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ Digitally signed by YERITSYAN SARGIS 3207830072 Date: 2025.01.20 17:19:56 AMT **Ս. ԵՐԻՑՅԱՆ**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am